թմբուկը գունավոր աղյուսներով արտաքուստ։ Նույն իսկ հեռավոր, միջին ասիական, չին-մոնղոլական ազդեցության հետքեր նկատվում են մեր ԺԳ. դարու մանրանկարչական զարդագրության (Հեթումի Ճաշոց, մետաքսի կտորներից առնված) և քանդակագործության մեջ. Հռոմայքի շենքերից մեկի դրան ճակատի բարձրաքանդակ Հիսուսը մոնղոլական դեմք ունի. Վայոց ձորի Նորավանքի խաչքարերից վոմանց մարդկային պատկերները մոնղոլական դիմագծերով են և հագուստով, ինչպես և նկատել և Strzygowski-ն*, իսկ քանդակագործը մեզ ուրիշ աղբյուրներից հայտնի գրիչ և նկարիչ Մոմիկն է**։

Պռոշյանների ստեղծագործություններն էլ, ինչ վոր մեզ ծանոթ են արդեն և պիտի ծանոթանանք այսուհետև, մաս են ամբողջի, վերև ակնարկված ԺԳ. դարու գեղարվեստական շարժման և փոխազդեցությունների։ Մենք հարկավոր համարեցինք այս փոքրիկ շեղումը, վորպես զի ավելի դյուրին կերպով կարելի լինի բացատրել և հասկանալ այն յերևույթները, վոր Պռոշյան պայազատների անմիջական ձեռնարկությամբ կամ նրանց իշխանության մեջ յերևան են գալիս իշխանության հաստատությունից մինչև ԺԴ. դարու կեսերը արվեստի այլ և այլ ճյուղերի մեջ, ճարտարապետական կառուցվածքից սկսած մինչև քանդակագործական, վոսկերչական և մանրանկարչական զարդագրությունն ու պատկերագրությունը։

Պռոշյանների զինանշան համարված կենդանական խմբանկարը յերեք մասի յե բաժանվում, և այդ առանձին առանձին մասերը մենք գտնում ենք Հայաստանում և Հայաստանից դուրս այլ և այլ տեղերում։ Վերցնենք, որինակ, յեղան գլուխը. Դիարբեքիրի Հալեպի դրան ճակատին կա մի քանդակ յերկու արձանագրությունների մեջ. թեատարած մի արծիվ մագիլները դրել և յեղան գլխի յեղջյուրների ծայրերին, իսկ յեղը բերանում բռնել և պարանոյսի զարդով մի ոդակ, մոտավորապես, ուրեմն, նման Դեղարդի բարձրաքանդակին։ Արձանագրությունների ընթերցումը Բերխեմի կողմից, ցույց և տալիս, վոր նա գրված է Որթոքիդ Ղարա—Ասլանի վորդի Մուհամմադի կողմից, 1183/4 թ., յերբ հաղթելով Ինալիդ Մահմուդին և Նիզանիդ Մասուդին, գրավում և Համիթը։ Բերխեմը անպայման զինանշան համարելով այդ, փորձում և բացատրել իմաստը, արծիվը համարելով հաղթական Մուհամմադի նշանը և յեղան գլուխը հաղթվողներից մեկն ու մեկի կամ քաղաքի նշանը։ Նա հիմնավորում և յուր յենթադրությունը նման յերևույթների կրկնությամբ մահմեդական ուրիշ իշխանների կյանքից։ Այս զինանշանի յերեք տարբերը, թռչունը, յեղան գլուխը և ոդակն առանձին առանձին գտնվում են Դիարբեքիրի շենքերի և պարսպի այլ և այլ մասերում։ Ավելացնենք նաև, վոր արծիվ թառած յեղան գլխի վերա, տեսնում ենք և ԺԶ. դարու պարսկական թավշյա կտորների վերա, վոր հավաքել է Sarre-ն*։

Բայց թնչպես բացատրենք, յերբ այս նույն յերևույթն առանձին առանձին և խմբակցության քիչ տարբերությամբ տեսնում ենք և Հայաստանի զանազան կողմերում. արդյոք պարզ փոխառություն։ Պռոշյան քանդակի մեջ վոչ միայն խմբակցությունն ու դասավորությունն է տարբեր, այլ և նրա առանձին տարբերը։ Այստեղ տեսնում ենք արծիվը մագիլների մեջ խոյ ունի բռնած, իսկ այնտեղ թառել է յեղան յեղջյուրների վերա։ Առհասարակ թեատարած արծվի

Մանրանկար ԺԱ. դարու. Ձեռ. Եջմ. № 369. **Պատկեր 74.**

գործադրությունը, հաշվելով և յերկգլխանիները, արվեստի մեջ հին է Առաջավոր Ասիայի ազգերի մեջ, սկսած Հետիներից** մինչև Սասանյանները, Բյուզանդացիք, Հայերն ու Վրացիք[1]։ Ավելացնենք, վոր նրանց գործադրությունը մատնանշում է Strzygowski-ն նաև միջին Ասիայում, և վորտեղից կարծում

Ինստիտուտի, Գիրք Ա. և Բ. 1921—1922. 188. ԺԶ. և հետագա դարերի ապիկված հայ արվեստի մասին Փ. Ասիայում տես Առնակի (Համբարձում Պ. Զօրթեան) հոդվածը. Թեոդիկ. Ամէնուն տարէցոյցը. 1923. 213։

* Die Baukunst der Armenier. 708: Уварова-ի Материалы. XIII. Табл. XXXVIII. պատկ. 83—84։

** Մեր Գրչության Արուեստը. Գ. § 108. 109։

* Manuel D'art Musulman. II. Gaston Migéon. Paris. 1907. 407

** Хетты. Культура Востока. 73. Weber. Die Kunst. պատկ. 13. Ed-Meyer. 28.

1 Strzygowski. Die Baukunst. 289. պատկ. 327.